



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ


Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 37

ՀԱՐԱՐԱԹ

12 ՄԱՅԻՍ 1907

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ջ Ե Ն Ի Թ

ՄԵԾ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՋ, 1900

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ. — Նեոսոդէլի դիսարանին. 1903
ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ. — Անդամ ժիւղի. Միլան. 1906

ԵԻՆ. ԵԻՆ. ԵԻՆ.

ԱՄԷՆ ՄԵՏԱՂԷ ԵՒ ԱՄԷՆ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ

ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉԻ ԹՈՒՐԳԻՆՑ ՀԱՄԱՐ

Փ. ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեծ վաճառատուն ժամացույցներու, շքա-
ներու եւ գոհարեղէններու

ԹԻԻ 16 = ՊԱՆԺԷ-ԳԱՐՈՒ = ԹԻԻ 16

Օռոզտի-Պաք հաստատութեան դիմացը

Ի Բերա, Կ'գանուի գոհարավաճառ Տ. Տ. ԷՔՄԷՔԶԵԱՆ ԵՂԲԱՐՑ քով,

Թիւ 400 Մեծ-փողոց.

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ


آ. آصاڤوربان) شرکت مرتبه مطبوعه — باب عالی جاده سینده نومبر ۵۰

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՆՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի հասցեի թիւ 52

Հատոր 40 փարսա

Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ Ջ Ե Ն Ի Թ



Ձե՛նքի, ոսկի ու ոսկի եւ ձեռքի
 Զփանգամայն մեհեմաներ
 կը գեցուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
 բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
 մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
 ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
 եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԹ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լազործուածը,
 հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենանները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐԱՔԱՅԱԿԱՆ
 ՄԱՍՆԱՎՈՐԱԿԱՆՆԵՐ

ԲԵՐՍ.

- (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, թիւնէլի ետեւը .
- (2. Դարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՍԱՐ

Չարշը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս , Մեծ փողոց , թիւ 343 եւ
 343 կրկին , Տիւզօղլուի տունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԱ. ՏՄԻ ԹԻՒ 37

ՇԱՐԱԹ

12 ՄԱՅԻՍ 1907



ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ

«ԱՆԴՐԱՆԻԿ ԴԵՐԱՍԱՆՈՒԶԻ»

1867 Յուլիս 27ին յուսանկարած

ԱՐՈՒՍԵԱԿԻՆ ԿԵԱՆՔԷՆ

[ԻՐ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՅԻՒՒ]

... Ու մեռա՛ւ վերջապէս :

Նոր սերունդը որ զինքը չէր ճանչցած, դադարաւոր չէր կրնար ունենալ թէ որքան տխուր է այս վախճանը՝ բաղդատմամբ իր սկզբնաւորութեան, որ այնքան փայլուն, այնքան՝ կրնանք ըսել՝ փառաւոր եղաւ : Ո՛ւր 1861ի Արուսեակը, ո՛ւր 1907ին, Ապրիլ 30ի Երկուշաբթի օրով՝ Հիւանդանոցէն Պալըզլը փոխադրուող անշուք ու անտէր դադարը ... :

Ազնուատոհմ ընտանիքի մը սերունդ, նըկարագիրով հպարտ, նոյն իսկ մեծամիտ և մեծամոլ, այդ 1861ի աշխոյժ ու փափուկ աղջնակը ինչպէս կարճատեւ փայլով մը անցած էր բեմական հորիզոնէն, նոյնպէս ալ իրական կեանքի մէջ շատ կարճատեւ յաջողութիւն մը կամ անդորր կենցաղ մը ունեցաւ : Երկու պարագաներուն մէջ ալ, գրէթէ յարդի բոց մը որ այն ինչ բռնկած՝ մարեցաւ, թռչուն մը հորոզինին վրայէն ակնթարթի մէջ սլացաւ անհետ եղաւ : Եթէ կարելի ըլլար հոգեբանական վերլուծում մը ընել, Արուսեակի հոգին ու նկարագիրը ուսումնասիրել, այս արագ շիջումին պատճառը շատ յստակօրէն պիտի յայտնուէր. — աշխոյժի, եռանդի չափազանցութիւնը կամ իր՝ տեսակ մը հրաքորքով բնաւորութիւնը պէտք է ըլլայ պատճառ իր կարճատեւ փայլին ու արագ անցքին : Ո՛չ մէկը մեր ծանօթ դերասանուհիներէն այնքան կամշոտ (capricieuse), այնքան զգայուն, այնքան վիճաւէր, այնքան խիստ ու կրքոտ չէ եղած, որքան Արուսեակ : Այդ չափազանցուած (exageré) զգայունութիւնը, դիւրայոյզ, նախանձոտ, ցուցամոլ ու հպարտ բնաւորութիւնը զինք այրեցին խանձեցին շատ կանուխ : Իր նկարագիրին այդ ցայտուն դիժները իր վրայ կ'երեւային այն դժբաղդ օրերուն ալ ուր թափառած կը շրջէր՝ կենդանի բողոք մը ցուցադրելով ամէն անոնց դէմ որոնք զինքը ծափերով կ'ողջունէին երբ բեմի վրայ կը տեսնէին իբրեւ ճարպիկ, աշխոյժ և անթերի դերակատար և կամ բեմէն դուրս՝ պաշտու-

մի, աղապատանքի ու դարպասումի արժանի պարմանուհի մը որուն պատրաստ էին զոհել իրենց բուրվառ սիրտը... : Վասն զի Արուսեակ, առանց արտակարգօրէն գեղեցիկ տիպար մը ըլլալու, ունէր յանկուցիչ ձիւքեր, շնորհալի և հրապուրիչ ձևեր, որոնք շատ կը վալէին իր քնքուշ ու ձկուն հասակին : Իր լուսանկար պատկերը, 1867 Յուլիս 27ին ձօնուած բարեկամի մը, որ ազնուութիւնը կ'ունենայ Հանրագիտակին նուիրելու որպէս զի բիւրաւոր հետաքրքիրներ առիթ ունենան վայելելու տեսքը « անդրանիկ դերասանուհիին », ցայտուն ապացոյց մ'է սա հարեւանցի վերլուծումին : Արուսեակի հոգեկան թաքուն տենչքերը, աւա՛ղ, այնքան կանուխ պատրանքներու հանդիպեցան և տեսական հետք մը չձգեցին իր բեմական գործունէութեան տասակէտով : Աղուոր լայն ճակատ մը, շրջանակուած չազանակ հիւսքերով իր աղուոր մազերուն, պճլտուն՝ սեւուրիկ աչուրներ՝ նուրբ յօնքերով աղեղուած՝ նուրբ ու հեզոտ շրթունքներ որոնք կէս դարու անջրպետի մը ընդմէջէն՝ դեռ յորդ զգացումներու բոյն մը կը ձեւացնեն :

Անոնք որ, իր փայլուն օրերուն, պատուհովութիւնը վայելած են լսելու իր ձայնը, պիտի խոստովանին անշուշտ թէ հոգիի նուրբ թելերը ցնցող, յուզիչ չեշտ մը ունէին որ սիրտերու կը արբէր և իր դերակատարութեան եզական ազդեցութիւնը կը շեշտէր հանդիսականներուն վրայ :

Ի՛նչ որ ալ եղած ըլլայ իր վախճանը և որքան ալ յանկարծական ըլլայ իր անհետացումը ասպարէզէն, անուրանալի է թէ մեր թատերական արշալոյսին աւուսեակն եղաւ ան ու իր անունը պիտի մնայ ասպարէզին փառքերէն մէկը որով մեր թատրը իրաւունք պիտի ունենայ պարծելու, և ասիկա գեղեցիկ օրինակ մը կրնայ նկատուիլ անոնց համար որոնք բեմական արուեստին հրայրքը կը զգան իրենց հոգիին ալքերուն մէջ :

ՍՄԱՅՏ ԴԱԽԵՆԱՆ

ԱՄԱՌՈՒԱՆ ՔՕՆՍԵՆ



Կիրակի օր խորհրդէլէզ և Նուագահանդէս: Մէկը տօն է բնութեան, և միւսը՝ արուեստի: Ինչ որ կուզէք գրաւ կը դնեմ թէ ասակից տասը քսան տարի առաջ Պոլսոյ հայերուն մէջ քսան հոգի կարելի չէր գտնել որ նուագահանդէսի մը ներկայ գտնուելու համար՝ ժամերով փակուելու ուզէին խորհրդէլէզի օր մը, վրան և չորս կողմը գոց սրահի մը մէջ, մինչ անդին բաց օդը կար, Հայտար փաշան, չայիրը:

Ճաշակի ինչ բարեշնչում: Եւ վերջապէս ինչ հաճոյք կայ, կաղաչում, թաց չայիրին վրայ փռուելուն մէջ, դիտելու համար միմիայն մարգագետինն ապուշ կանանչութիւնը որուն գոյնը հինգ հազար տարիէ ի վեր պղտիկ փոփոխութիւն մը անգամ կրած չէ և կամ հիանալու համար «ապրիմ մեռնիմ» ին վրայ, որու թերթիկները եթէ «կը սիրէ գիս» ով փեթթել սկսիս՝ անպատճառ «չի սիրեր» ով կը վերջանան միօրինակաբար: Թող փորձեն անոնք որ սրտի խնդիրներուն մէջ տարակոյսներ ունին տակաւին:

Մարգագետինն մէջ մինակ բնութիւնը կարելի է գտնել. իսկ այն օրուան նուագահանդէսին մէջ՝ թէ՛ բնութիւնը և թէ՛ արուեստը:

Կանանչութիւն, թարմութիւն կուզէք. աւասիկ ձեզի տանվեցէն՝ քսան տարու դեռատի օրիորդներ. ծաղիկ. ո՞ր տեսակէն կ'ախորժիք: Վարդ, մանուշակ, հօրդանսիա, միւսկէ, բանսէ. ես ինչ գիտնամ, ամէն տեսակը կայ... անոնց գլխարկներուն վրայ. բոյր կը փնտռէք. ո՞րմէ կ'ախորժիք, օրօքանաքս, ֆուէն-քուրէ, Շիրը, և մնացածները:

Որովհետեւ նուագահանդէսի գեղեցկութիւնը չայրի տափակութենէն զանազանող շատեր կան մեր մէջ, ահա ինչո՞ւ համար Բըթի-Շահի սրահը լեփ լեցուն էր այն կիրակին:

Համայնքին crêmeը ամբողջովին ներկայ գտնուեցաւ այդ փառաւոր հանդէսին, որուն յաջողութեան համար ինչե՞ր քաջեցին կարգադիր մասնախմբին անդամուհիները:

Ինչ աշխուժութիւն, ինչ եռանդ, ինչ հոգի այդ աղջիկներուն քով: Կապոյտ, պարզ չրջազգեստ մը և թեւաւոր ճերմակ բեղոյր մը եթէ ունենային, կարելի պիտի ըլլար բաղդատել զանոնք Գթութեան Բոյրերու հետ, այնքան ազնիւ է անոնց ըրածը և այնքան համակրելի իրենց գործը:

Գատը-գիւղցի՛ք ... for ever:

Միթէ մեծ մասամբ անոնց չե՞նք պարտիր այն երեք հեշտալի ժամերը զորս անցընել կրցանք Թաղապետական թատրոնին մէջ: Հանդէսին ծրագիրը հոն յղացան, յայտագիրը հոն շինուեցաւ: Իրենց արուեստական աջակցութիւնը նուիրողներու ճիշդ կէսը անոնցմէ ներկայացան. բազմութեան մեծամասնութիւնը Գատը-գիւղցիներ էին, ինչպէս նաեւ այդ գիւղէն էին այն երիտասարդները որոնք այնքան tactով հանդէսին կարգապահութեանը հակեցին:

Անիրաւ չըլլանք. Գատը-գիւղցիները չընորհաւորութեան արժանի են:

Տիկին Կ. Հ. չէր զլացած իր սիրայօժար աջակցութիւնը նուիրելու այդ գործին և իբր ծանօթ երաժշտական արուեստասիրութեամբը ճոխացնել նուագահանդէսին յայտագիրը:

Տիկին Հ. մեծ վարպետութեամբ զարկաւ Շօքէնի Grande Polonaise, զոր ամէնէն զօժուարանածներն անգամ ջերմօրէն ծափահարեցին. ոչ նուազ յաջողութեամբ զարկաւ նաեւ Լիսթի միգրեթի վրայ ֆանթազիան:

Այդ երկու հատուածներուն մէջ արուեստի նրբին գլխակցութիւն մը ցուցուց, զոր ձեռք բերելու համար երկար տարիներու աշխատութիւն մը և մասնաւոր ձիրք մը անհրաժեշտ են:

Օր. Վ. Պ. Թէեւ Բերացի, բայց իր Գատը-գիւղի ընկերուհիներուն յաջողութեանը մեծապէս նպաստեց. և հանդիսականներէն կրկնուած ծափահարութիւններ խեց Լիսթի Տրդ Ռաբսոտին և Ֆուռլանիի Concerto à la Serenandeին մէջ, զորս ամբողջ սրահը հըրճուանքով ունկնդրեց... ակնապիշ:

Հանդէսին գոհարն էր Օր. Հ. Կ.: Թէեւ մանկամարդ՝ բայց սուղ ժամանակի մէջ զարմանալի հմտութիւն մը ձեռք անցուցած է: Քնքուշ իր ճերմակ և սիրուն արդուզարդին

մէջ, իրեն զրաւեց ունկնդիրներուն ուշադրութիւնը և համակրութիւնը:

Հիանալի կերպով զարկաւ Մէնտէլսոնի մեծ Concertoն նուագաժողաց խումբին ընկերակցութեամբ. և անոր մէջ այնքան հմտութիւն, մասներու արագաշարժութիւն և զգացում զրաւ որ պատիւ կը բերեն իրեն և իր դասաստուին Պ. Ֆուռլանի:

Շատ սիրուն էր նաեւ Լիսթի 2րդ Ռաբսոտին, որ հակառակ այնքան անգամ լսուած ըլլալուն, նորէն հաճոյք պատճառեց:

Օր. Կ. հազուադիւր յարմարութիւն մը ունի դաշնակի համար, և զարնուածքին մէջ այնքան շնորհ կը դնէ որ նախանձը պիտի չարժէր դաշնակասէր շատ մը օրիորդներու:

Աւելորդ է ըսել թէ պարոն և տիկին Ֆուռլանի clouն եղան ցերեկոյթին:

Պարզապէս banalité մը պիտի ըլլար իմ կողմէ, եթէ պզտիկ ջանք մը իսկ ընէի անոնց համբաւը աւելցնելու համար:

Ընտիր էր նաեւ նուագաժողներու խումբը:

Պոլսոյ մէջ շատ քիչ անգամ ասկից աւելի յաջող արուեստասէրներու նուագահանդէս մը տեղի ունեցած է. ահա ինչո՞ւ համար անգամ մը եւս շնորհաւորելու է զայն կազմակերպողները:

Երեկոյթը ժամը 10ին մօտ վերջացաւ և հանդիսականները մեկնեցան, իրենց հետ տանելով ... դէպի Շիշլի պողոտ մը ընկուծրագիր մը զոր շատեր իրագործեցին:

Ե. ԱՆՓՈՒՍՐ

Երկու բարեկամներ հեւ ի հեւ շոգեկառքին կայարանը կը դիմեն, մին անտարբեր իսկ միւսը վազելով, կիշէին մօտ հասնելուն, վազողը տոմսակը կ'առնէ և հանգիստ կը նստի վակօնը ու շոգեկառքը սուլելով ճամբայ կ'ելլայ, իր ետին ձգելով դանդաղ ընկերը ասի ի բերան: Հետեւեալ օրը երբ իրար կը հանդիպին,

— Եղբայր ինչու չի հասար կը հարցնէ բարեկամը:

— Սիրելիս, իմ ժամացոյցովս դեռ քառորդ ժամ մը կար ատենին ...:

— Աս ժամացոյցը գործածէ որ ժամանակին տունդ հասնիս ըսելով դրպանէն կը հանէ Զէնիթը:

ՄԵՌԵԼՎՈՒ

Sof. ձեկլաւանի գրուածքներէն

Մարդիկ աւելի չարիք կը գործեն անգիտակցաբար քան թէ գիտնալով. մեր այս ըսածին իրեւ ապացոյց կրնայ ծառայել հետեւեալ դէպքը:

Ազգատիկ և միանգամայն վերջին աստիճան տգէտ ընտանիքի մը պատկանող տասնըվեց տարեկան աղջիկ մը, ամսուան մը միջոցին կը կորսնցնէ իր հասակին յատուկ եղող չէն ու զուարթ բնութիւնը և կը սկսի օրէ օր տկարանալ, այնպէս որ ա՛լ հիւանդ վիճակի մէջ կ'իյնայ: Մայրը թաղին մէջ բնակող ճանչւոր ընտանիքի մը այցելութեան երթալով կը սկսի աղջկանը հիւանդութիւնը պատմել ի ներկայութեան ուրիշ կին հիւրերու և հետեւեալ խորհրդածութիւնները տեղի կ'ունենան:

— Քա նաեւ Արմիկ տուտու, Ազնիւիկիս քիթը վախիթ մըն է քի կախ է, դուրսը բարձէն վեր առած չունի, ի՞նչ ընեմ չիյտեմ, ի՞նչ ունիս կ'ըսեմ նէ՛ կուլայ:

— Քա աչքս ելլայ, ի՞նչ եղաւ չօնուխս, վարդ կըլմանէր մեղա՛յ, պանէ մը վախցա՛ւ, մտեցա՛ւ:

— Ես ալ չիյտեմ, խուրուցբուէս կը մուսնիմ կոր:

— Քա քուրուկ, չըլլայ քի մէկը սիրէ: Է՛հ, գիտես, նիհայէք ճահիլ է. աստեղ վաթսուն տարու կնիկները խուսուրմիւ կ'ըլլան կոր:

— Քա չէ, խուզի կըլմանի, ասիս տեղ պազալմ:

— Քա երեսին քեհկը նասը՛լ է:

— Քա ո՛ւր է քիմ կարմիրները գետինը, կ'իյնային, հիմա իսկ գեպտեղին է կտրեր, խունկ է դարձեր:

— Ուժը նասը՛լ է, տե՛ղն է, եախես տեղը չէ:

— Չէ՛, ո՛ւր է քիմ վեր վար կը վազէր, խըվմէք կ'ընէր, կը լուար, կը սրբէր, հիմա իսկ խօրաթեղու հալ չունի:

— Քա վախ եալուում, աչքս քօրնայ:

— Սիրտը նեղութիւն ունի, եախոս չունի:

— Հէլէ ադ նիհէքը ճիշ մի հարցներ. եր-

կու խօսք եւել ընեմ նէ՝ հեմ կուլայ հեմ ալ էօ՛ֆ բիւֆ կը պօռայ:

— Իշտահը նասը՛լ է: Զիւնքի չուտէ նէ՝ բիւսբիւսին կ'իյնայ:

— Տաս նէ քիչ մը պան՝ կ'ուտէ, չի տաս նէ՝ չուտեր. քիչ մըն ալ պէլի պէլիսիգ հազ մը ունի, էօհէ՛ էօհէ՛ կ'ընէ:

— Ա՛ն է որ ա՛ն է, մեղա՛յ, պէսպէլի:

— Ի՞նչ, քուրուկ, ոտքդ պագնեմ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, մեռելկոխ է եղեր, պէլի բան:

— Մեռելկոխ, քա ցե՛րսէն ցե՛րսէն:

— Ամա՛ն դուն ալ, հիմա ատոր ցե՛րսէն ցե՛րսէն կա՛յ մի եա, մարդ չէ մի: Իժահ չունի, բէնկը նետեր է, կ'ըսեն կոր, ուժ չունի, սիրտը նեղութիւն կայ, չոր հազ մը, էյ մեռելկոխ չէ տէ ի՞նչ է. աստար տարուան կընիկ, չիյտեմ զանհէ:

— Էյ քուրուկ, էս քեզ մեղայ, ատոր ճարը ի՞նչ է նէ՝ ընենք զաւակս աղատի:

— Քա ճանքմ հեկի մէյ մը հեկիմի մը ցուցունենք, նայինք ի՞նչ կ'ըսէ:

— Էյ հապա՛, Ամպեր տուտուն հախ ունի. կ'ըլլայ քի հեկիմի պան կ'ըլլայ. եաղլըչ պան մը չեկանք ընենք տէ՝ չօճուխին արուներ մտնանք:

— Քա ամա՛ն դուն ալ, Բրաբ տուտու, հեկիմները մեռելկոխէն, կեղինճիկէն, մայասըլէն չեն հասկնար:

— Քա քուրուկս, հեկի սա մեռելկոխին իլանը շուրուքովը ընենք տէ՝ եղաւ նէ՝ եղաւ, չեղաւ իսէ հեկիմին խրքիւր չի կայ եա՛: — Հէքիմէն առաջ աս մեռելկոխին քերքիպը ընենք:

— Էյ հապա, բանօնը խօրաքային ի՞նչ ըսեմ: Ինչ պէտք է նէ՝ ընենք:

— Քա Արուս տուտու, խօսքս մտիկ ըրէք տէ մինձ հէքիմի մը ցուցուցէք, կ'ըսեմ կոր:

— Էյ չէ, ըսի եա, խելքս չհասած պանին չեմ խառնուիր, մեռելկոխ է կ'ըսեմ կոր նէ՝ մեղա՛յ ...

— Էյ իլանը ի՞նչ է:

— Իլանը խօլայ է, հարիւր տիրէմ քեմար հաջ քալամ երեք գիշեր պարձին տակը պիտի դնես:

— Եօլլու, սօղրամ:

— Սօղրամ, առտուն կանուխ, մարդու հետ չխօսած, ետիդ չնայելով, Ազնիւիկին հետ շխտակ գերեզմանատուն պիտի երթաք, քեմար հաջն ալ ջըխընով պարապար պիտի տանիք, հոն հաջը հողեւոր տիրոջ գերեզմանին վրայ պիտի դնէք, երեք անգամ եքրածը պիտի դառնաք:

— Ատ ալ աղէկ, խօլայ պան:

— Մտիկ ըրէք, լաճս մի կտրէք քիմ բուսուլաս շաւըրմիւ չընեմ. Ազնիւիկին ձեռքերը, ոտքերը, գլուխը ան գերեզմանին վրայ պիտի լուաք, ամա ոտքին քառածը՝ ոտքը, ձեռքին քառածը՝ ձեռքը, գլխուն քառածը՝ գլուխը:

— Ատ է նէ՝ պան մը ըսել չէ:

— Կայնէ՛, էյէր ո՛ր մեռելէն քիմ մեռելկոխ ըլլալը գիտէք նէ՝ անոր վրայէն ավուհ մը հող կ'առնէք, իրեք գիշեր բարձին տակը կը դնէք, եախօս սրտին վրայ. սօղրամ շա՛փախը չի նետած, շաքաթ առտու շատ կանուխ Ազնիւիկը և ադ հողը շխտակ ան մեռելին գերեզմանին վրայ կը տանիք, «Լոյս Լուսաւորչին, հաւատք Քրիստոսին» երեք անգամ է՛րսէք, ան բարձին տակի հողն ալ Ազնիւիկին կ'առնեն ի վար կը թափէք, բիրուբակ կ'ըլլայ չօնուխնիս:

— Վո՛ւյ Արուս տուտու, Աստուած զաւկընեդ պահէ հեմէն, ինչ պէտք է նէ՝ ընեմ:

Այս խորհրդակցութենէն ետքը անմիջապէս կը սկսին դարմանումի, այդ այլանդակ կերպով ամբողջ ամիսներ շարունակելով: Խեղճ աղջիկը օրէ օր կը հալի, կը մաշի, երբ օր մըն ալ բերնէն մեծաքանակ արիւն գալով կը վաղեն բժշկին օր կը յայտնէ թէ շատ ուշ մնացած են, ու աղջիկը իր ծաղիկ հասակին մէջ կ'իջնէ սեւ հողը, քանի մը ագէտ ու ինքնահաւան կիներու զոհ երթալով: Իր մեռնելէն քանի մը օր ետքը, աշնան անձրեւոտ առտու մը, սեւեր հագած երիտասարդ մը կուգայ գերեզմանատուն և Ազնիւի հողակոյտին վրայ կը դնէ ծաղկեփունջ մը և ընդ երկար կը մնայ մտախոհ, մինչդեռ արցունքի դառն կայլակներ կ'իջնեն իր այտերէն ի վար:

* * *

Այս կարգի օրինակներ կարծուածէն շատ կը պատահին, աւա՛ղ, մանաւանդ աղքատ ու տգէտ ընտանիքներու մէջ, սակայն հանրութեան անծանօթ կը մնան: Մեր ամենուս պարտքն է մանկ ընկերութեան զանազան մութ խաւերուն մէջ և հոն տիրած տգիտութեան և անկէ առաջ եկած չարիքները երեւան բերելով, պայքարիլ անոնց դէմ:

ՍՈՒԳԻ ԲԱԺԻՆ

ՅԱԼԷՏ ՈՂԱՅԵԱԼ Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

«Խոնկ եւ Յուզ» իդ սրիսուր բելերն ո՛վ փերոզ, Արձազանգներն էին սրբիդ պոռպկումին. Կ'փրդընկի գայն բնքերցողն ո՛ն, սրբադող Հառաջներով, մէջը կեանքի գարունին:

Ան ալ բաժին կ'առնէ իսկոյն փու սուգէն՝ Վիւսը կ'ըմպէ կաթիլ, կաթիլ իր հոգին, Յոռեհես մը կը դառնայ ան ապաքին, Հանդէպ կեանքին ոյր կը փառէր կաթոգին:

Ան ալ կ'ապրի փու խրոսովներ ու յոյգեր, Դեռ պատանի հասակ մարդ մը կը դառնայ... Շոյս կը մոռնայ երազսեց ջրնո՛րք սէ՛ր, Ալ չ'օրօրուի անուշներով անխրնայ:

Յանկարծ կրգգայ քե ամեն ի՛նչ պատահե՛հ, Սիրոյ խօսքեր իբր քրմայ կը բըռնին, «Սիրող սրբին վիւսը հոգւոյն պատանգն է...», Կ'ըսէ մրսէն համոզումով ո՛ւխտ, վերջին ...:

Ո՛վ բանաստեղծ, կրքիչ, գիտուն միւս խորհող, Որ Դուն անդարձ հրաժեշտ կուսաս այս կեանքին,

Դեռ չի վայլած ... այդ սեցզաններդ ... դեպ ի հող, Կը սրլանայ երկինք Գուկին վեհ հոգին ...:

Ոսկորներուդ հանգիստ, ով Տիար Պերպերեան, Շիրմին ծոցէն անդաւաճարի կեանք հեծ, Ապրի ... սրբեր Գեղ չեն մոռնար յաւիտեան, Թե ... դարեր իսկ քան իրարու հրաժեշտ ...:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷԶԵՐԵԱՆ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՆՈՒԷՐԸ

Բարեկամիս՝ Գ. Մետրոպեանին

Մարիամին անստգիւտ գեղեցկութիւնը, հրապուրիչ աչքերը, սեւ երկայն մազերը, բարակ ու նուրբ յօնքերը, շանթով նայուածքը, անոյշ խօսուածքը, նազելի շարժումները, մինիսիկ բերանը, մարգարիտ ակուսները ու խրոխտ քաղուածքը զգլխած, հմայած, կախարդած էին Պ. Խոզանակեանը՝ որ իր զբաղումը մէկ կողմ թողած՝ զայն հետապնդելու, անոր հետ խօսելու միջոցները յղանալու յատկացուցած էր իր թանկագին ժամանակը:

Սակայն ինչ որ ալ ըրաւ, ու եւ է օգուտ մը չունենալէ զատ, իր այնչափ նախանձելի գործն ալ կորսնցուց բաժնուելով իր բարեունէն, որ առաջնակարգ փաստաբան մըն էր և որուն քով աշխատած ժամանակ բաւական ալ դրամ կը չահէր իր ամսականէն զատ դուրսէն մասնաւոր գործեր ընելով:

Իր գործէն ելլալը բնաւ չտրամեցուց զինքը: Որո՞ւ հոգ. իրեն մտասեւեռումը այդ աղջիկը ձեռք անցընելուն վրայ միայն կեդրոնացուցած էր: Իր պաշտելի Մարիամին հետ խօսելու անգամ մը, ա՛լ բան մը չէր ուզեր: Դիւրին էր իրեն համար դարձեալ փաստաբանի մը քով աշխատիլը, իր աչքաբացութեան և գործին մէջ ստացած հմտութեան ու վարժութեան շնորհիւ:

Ամէն կիրակի իր պաշտելին ո՛ր եկեղեցին որ երթար, ինքն ալ հոն էր անպատճառ:

Եկեղեցական արարողութիւններէն վերջ հեռուէն հեռու անոր կը հետեւէր, բոլոր ու շաղթութիւնը անոր վրայ կեդրոնացուցած:

Իրիկուն մը մեր պարոնը երբ իր լրագրավաճառին խօնութեմ նստած «Արեւելք» օրաթերթը կը կարդար, Մարիամին յանձնուելու համար իրեն նամակ մը կը տրուի լրագրավաճառին կողմէ:

Զմոռնանք ըսելու թէ՛ Խոզանակեան և Մարիամ մի եւ նոյն թաղը, մի եւ նոյն փողոցին մէջ կը բնակէին: Լրագրավաճառը գիտէր ասիկա և իբր պարզ բարեկամական յոգնութիւն մը առաջարկած էր:

Շատ բարեպաշտէն էր առիթը խողանակ-
եանին համար, պէտք էր օգտուիլ անկէ. իր
սիրելիին հետ յարաբերութեան սկսելու ժա-
մանակը հասած էր: Նամակին պատրուակով
պիտի կրնար բարեւել զայն և բարեւուիլ
փոխադարձաբար:

Ուստի ընթերցումը կէս ձգելով վազեց
չիտակ իր սիրականին տունը: Պաշտելին էր
որ դուռը բացաւ:

— Բարի իրիկուն, օրիորդ:

— Բարի իրիկուն:

— Այս նամակը ձեզի ուղղուած է. հը-
րամմեցէ՛ք, ըսելով յանձնեց նամակը:

— Ո՞վ է զրկողը, կրնամ հասկնալ արդե-
հօք ...

— Ինչո՞ւ չէ, լրագրավաճառը զրկեց:

— Հա՛, հասկեցայ ինչու համար ըլլաւ,
մէռսի, մէռսի, շատ շնորհակալ եմ ...

— Չարժեք, մեծ բան մը չէ ... մնաք
բարով:

— Երթաք բարով ...

Դուռը կը գոցուի:

* * *

Յաջորդ իրիկունը նամակ մը ուղղեց խո-
ղանակեան իր սիրելիին, առջի օրուան տե-
սակցութենէն համարձակութիւն առած:

Ահաւասիկ նամակին պարոտնակութիւնը:

« Պաշտելի օրիորդ,

Բաւական ժամանակ է, արդե՛հ, նպաստա-
ւոր առիթ մը կը փնտռէի ձեզ ծանօթանա-
լու, ձեզի հետ յարաբերութիւն հաստատելու,
ձեր դիւրիչ ժպիտներէ՛ն գիցովնալու, ձեր
համեղ խօսուածքը լսելու համար:

Այսօր, շատ ուրախ եմ եւ չափազանց
երջանիկ՝ որ վերջապէս երկար սպասումի
մը ետք յաջողեցայ երեկ իրիկուն այդ առիթը
ձեռք անցընելով՝ խօսելու բաղդին արժա-
նանալ ձեզի հետ:

Կը փափաքիմ տեսնուիլ եք մերժուելու
չդատապարտուի սիրահրաւեր առաջարկս:

Անուշտ, չմերժուած ըլլալս իմացնելու
համար սոյն նամակիս պատասխանել կը հա-
նիք, հոգ չէ քե երկու բառով:

Ձեր լուսնիւնը մեծ վիշտ ու տրտմութիւն
պիտի պատճառէ ինձ: Պիտի ուզե՞մ որ այդ-
պէս ըլլայ ...

Ձեր ժպիտներուն կարօս
խողանակեան»

Մերժուած չէր իր առաջարկը: Իր զըր-
կած նամակին պատասխանը ստացաւ երկու
իրիկուն վերջ, սիրուն քառը-բօստալով մը:

Երկրորդ նամակը եւս զրկեց երիտասար-
դը, որուն մէջ rendez-vous մը խնդրած էր:
Ժամադրութեան օրը սինեք գայքք բաւէ
մը ետք, առաջին անգամ ըլլալով հագած էր
իր նոր կարել տուած հագուստը, աղջկան
աչքին աւելի փայլուն երեւնալու համար:

Հետը տարած էր նաեւ նուէրներ իր պաշ-
տելիին համար:

— Առէ՛ք, պաշտելիս, ասիկա ձերն է
ըսելով գրպանէն կը հանէ շիշ մը Ուլիկան,
որուն համար 54 դրուշ տուած էր:

— Ես նուէր չեմ ուզեր, անուշա, ինծի
պէտք եղածը սիրտդ է, եթէ անիկա իմ տը-
րամադրութեանս տակ դնես և ուրիշի չտաս,
այն ատեն է որ երջանիկ պիտի ըլլամ կը
պատասխանէ Մարիամ:

— Սակայն սիրելիս, առանց նուէրի սի-
րահարութիւն կ'ըլլամ, մանաւանդ հիմա որ
ամէն աղջիկ աչքը նուէրի բացած է: Քեզ
համար առած նուէրս չընդունելովդ, սէրս
մերժած կ'ըլլաս. ըսել է թէ զիս չես սիրեր
կոր:

— Հոգիիս չափ և քիչ մըն ալ աւելի կը
սիրեմ քեզ, սակայն նուէրդ չեմ ընդունիր,
ասիկա սկզբունքս է, երկրորդ չեմ ուզեր որ
ինծի համար դրամէ ելլաս, պարագայ ծախ-
քերով: Մեզի համար ամէնամեծ նուէրը մեր
սիրտերն են, տո՛ւր ինծի սիրտդ, ալ ուրիշ
բան չեմ ուզեր, անիկա պէտք է ինծի:

Չափազանց յոգնեցաւ, աչքատեցաւ խո-
ղանակեան իր տուած նուէրներէն գէթ մէկ
հատը իր սիրելիին ընդունել տալու համար,
սակայն Մարիամ միշտ անդրդուելի կը մնար
իր որոշումին վրայ ու կը կրկնէր « ես նուէր
չեմ ուզեր, սիրտդ պէտք է ինծի »:

Ուրիշ օր մը երբ դարձեալ կը տեսնուէին
տեղ մը՝

— Ըսել է նուէրս չպիտի ընդունիս, կ'ըսէ
խողանակեան:

— Կը ցաւիմ որ « ոչ » ըսելու հարկին
տակ կը գտնուիմ. ինչպէս ըսի, ասկէ առաջ,
սիրտդ պէտք է ինծի և ոչ թէ ուրիշ բան:

* * *

Առտու մը երբ գրասենեակ երթալու համար տունէն դուրս կ'ելլէի, դրացիներէս իմացայ որ իրողանակեան անձնասպան եղեր է, հետեւեալ նամակը գրելէն վերջ, զոր իր գրասեղանին վրայէն գտեր են:

«Մարիամիս հետ խօսած ժամանակս, ինչ որ բրի, չկրցայ նուեւ մը բնգունել չալ իրեն, կը մերժէր միտք բսելով՝ «ՍԻՐՏԻ ՊԵՏՔ Է ԻՆՏԻ, ԵԹԷ ԱՆ ՏԱՍ, ՈՒՐԻՇ ԲԱՆ ՉԵՄ ՈՒՋԵՐ ԵՍ»:

Խորհեցայ թէ ինչպէս կրնամ սիրս իրեն չալ, քանի որ ողջ եմ, ուստի որոշեցի անձնասպան ըլլալ, որով գործը կը դիւրանար:

Արդ, կը խնդրեմ հիմա որ զիս բնող բժիշկները հանին մարմինէս հանել սիրս եւ նուիրել պատշտի Մարիամիս: Տուեմ իրեն եւ հարցուցեմ թէ ինչ պիտի ընէ սիրս:

Մնաք բարով:

Բաւական միամտութիւն չէ՞, սիրելի ընկերացի:

Բերա

ՍԵՊՈՒՇ Մ. ԱԿՈՒՆԻ

ԽՍՔԵՐՈՒ ՏԱՐԱՓ

ԼԵՅՈՒՆ ԿԱՍ ՊԱՐԱՊ

Գիտականորէն հաստատուած է թէ՛ մարդ օրուան 12 ժամերուն մէջ, միայն մէկ ժամ լեշուրն ու 11 ժամ պարապ խօսք կրնէ, ուրեմն ասկէ կը հետեւի թէ, ծառանիդ երբեք չեղած չէ գիտական ճշմարտութիւնէն:

×

Քանի որ այս օրերս՝ խմբագիրները, տիրացուները, իրէքճիները, տէօքմէճիները, լուսարարները քահանայ կըլ ան, հետեւաբար ես մեղաւորս ալ մտադրած էի՝ մարտին ծեւրաշատ ու բազմածուխ հարուստ թաղ մը քահանայ ըլլալ, սակայն երբ կը տեսնեմ թէ՛ մեղուցեալ կին մը իր մեղքն անդամ կը դրժկամակէր ինձ տալ, բսելով թէ՛ «վայ գըլ-խուդ տէրաէր ըլլաս նէ քեզի ո՞վ կը խոստովանի», անոր համար վաղ անցայ ու շատ մը ստիպումներու ալ տեղի տուի, թէ եւ բռնաւ զօռ ընող մը չիկար:

×

Վերջապէս կազմուեցաւ Ղալաթիոյ դըպրաց դասը, որուն թիւը ըստ կանոնագրի յանգեցաւ տասը, որ պիտի գեղգեղէ երգեցողութեանց միայն պատարագի մասը, երբեք դուրսէն տիրացու չը պիտի առնեն եկեղեցւոյ դասը, ամէնքը մէկ պիտի ճաթեցնեն դպրապետին գլխուն քասը, երբեմն ալ պիտի կորսնցնեն բաղնիքին քասը, երգեցողութիւնը պիտի փարատեն հաւատացեալին սրտին բասը, ժամարար Հայր Սուրբը պօլ պօլ պիտի տայ նշխարն ու մասը, վերջն ալ դպրաց սենեկին մէջ պիտի ուտեն լոխմային խասը, որով վերջնապէս պիտի կանոնաւորի մեր երգեցողութեանց պակասը:

×

Կաթի մածուցի ամիս այս մայիս,
Ծաղիկ ու դալար որ կողմ որ նայիս,
Լեռներ ու սարեր ու կանանչ մարգեր,
Ուրտեղ կղզոսնուն երջանիկ զոյգեր,
Ուտել խմելով պարելով զուարթ,
Հրամցնելով իրարու գաւաթ,
Այն ալ չունի կուտ, իրեն պարտիզին...
Մէջ նստած քովը չրոգին փգին,
Թող քէպապ ընէ ու նետէ օղին,
Ու կանուխկէկ մը մանէ անկողին,
Մայիսն ալ նոյն իսկ կը տօնուի կուտով,
Ով որ չըւնի կուտ թող կըլլէ զուտ հով:

×

Հռչակաւոր դիտուն տօքթ. Սուլապ պէյին, իր բազմամեայ փորձառութեամբ ու աշխատութեամբ վերջապէս գտեր է կնոջ մը արդուզարդին տեւողութիւնը իր տարիքին հետ բաղդատական հաշուով, այսինքն՝

ժամ

20 տարեկան կնոջ արդուզարդը կը տեւէ	1
30 » » » »	1 1/2
40 » » » »	2
50 » » » »	3

պայմանաւ որ այս վերջնոյն մազի ներկին ու ճրմարդին գործը կանխաւ տեսնուած ըլլայ:

Մնամ Սկիւտար
ԵՐԾՈՂ

ՏԱՔ, ՏԱՔ, ՏԱՔ...

[ԲՐՏՆԱԹԱԹԱԻ ՅՕԴՈՒԱԾ]

Հաւատացէ՛ք, որ ես մեղաւորս ձեռնէ տա-
սը տարի աւելի պիտի ապրիմ։ Թէեւ «Աստու-
ած չընէ» ըսողները «Աստուած տայ» կըրկ-
նողներէն շատ ու շատ աւելի պիտի ըլլան,
մանաւանդ զրչիս տակ ուզած ձեւերս առ-
նող ճալաճուլա դաստկարգէն, սակայն և
այնպէս պարզեմ թէ ինչու։

Անցեալ առաւօտ երբ դեպիւր բան մը
ձգողի երեպագան քաղուածքով նաւամատոյց
կ'իջնայի, ինչպէս եղաւ մահալլե առասի
փայտաշէն տուններէն մէկուն պատուհանին
առջեւ լուս տեսայ ...

30-35 տարեկան լոբամարդի մը ֆանէլան
կը հանէր, երեք երեք հատ աւի մեօնիւրներ
կրող՝ կող թեւերը, խոլ խապալսիի պէս
երկարելով։

Մարդ ի ծնէ կոյր ըլլալու է, որպէս զի
այս տեսարանը անտեսէ, անանկ չէ՞ թօլա...

Ոտք է կը սա՛ի կ'ըսեն, միթէ աչքը, չի՞
սահիր ...

Ես կ'երգնում որ եթէ ամառ չըլլար, և
տաքը չի կոխէր, շնորհալի այդ տիկինը վա-
րադոքին ետին պիտի բանար իր թեւերը ու
ես չպիտի տեսնէի և ուրիշ տեսնող մ'ալ
մոզքը չպիտի մտնար։

Տաք, ՏԱՔ, ՏԱՔ...

Բայց տեսէ՛ք թէ այս տաքերու տակէն
ինչեր դուրս կուգան ... Թմրած օձերէն
գաս։

Գիշերները անտանելի տաքէն այր և կին
չեն կրնար քնանալ, և բաց պատուհանին
առջեւ կուկուկի պէս դէմ դիմաց, կսկսին
խօսքի, խօսքը կատակի կը փոխուի, կատա-
կը կըսըկ կըլլայ, բարկութիւններ կը շարժի
և ... չեմ գիտեր, բայց կարծեմ թէ կը
ծնծկուին ալ։

Յերեկին, տանը մէջ մտտ տիկիններ, չի
կրնալով հանդուրժել չափազանց տաքին, կը
հանեն կը նետեն ինչ որ հագած են տակէն և
այդ եւայի քօսթիւմով բաց պատուհանին
առջեւ երբ իւֆիւր իւֆիւր օդ կ'առնեն, դի-

մացի չայիրին վրայ նստող չեյրսեֆի Մու-
շօնաչին բերնի շողիկ կը վազցնէ ի տես, ա-
տեն ատեն քիթը խառնելով։

Երիտասարդ սիրահար ու սիրահալ միւ-
սիւներ, գիշերային բեռքաքիի ելլալով տու-
ներու պատշգամբներուն տակ կը սլքտան եօծ
կ'ընեն, բիւծ կ'ընեն տիրող տաքէն, մինչ
տուններու տակէն կամաց կամաց վրայ հաս-
նող ջով հայրեր փառաւոր տփոցով մը եփոցը
կը դնեն զիրենք։

Նազեկափալիւաշուք օրիորդներ, տիրող
տաքէն, տակէն մերկ վրայէն ճերմակ մու-
սուլին պուզներով փողոց կ'իջնան, և իրենց
հասցէին ուղղուած կը լսեն այնպիսի խօս-
քեր, որոնցմով կաս կապուտ կը կտրին։

Սրունքներս ու ոտքերս կը խաշին կոր ը-
սող կարգ մը տիկիններ, գուլպաներնին հա-
նած բակ վար կուտան, մինչ զարգալաքնի
թօտօրիներ և պագալափիներ սիկառ ի բերան
« Տեսական ընթացք սրունքաբանութեան »
անուն գիրքին յառաջաբանը կը պատրաստեն։

Ես շատ բան գիտեմ ըսող կարգ մը տան
տիկիններ, քաշը տառերկու զրուշնոց միսը
կ'եփեն ու կը հոսեցնեն։

Օրիորդները չի կրնալով հանգիստ քուն
քաշել և անուշ երազներու ենթարկուիլ՝ ի-
րենց տառանձնատենետիկներուն մէջ ... Սաղ-
մոս կերգեն։

Փափուկ մարմինները չի կրնալով տոկալ
կիզիչ ջերմութեան, պուտիկ պուտիկ դուրս
կուտան, խալիի պէս կտրմիր մը գոյացնե-
լով անարատ դէմքերու վրայ։

Տաք, ՏԱՔ, ՏԱՔ...

Բայց տեսէ՛ք թէ տիրող տաքին տակէն
դեռ ընտանեկան ինչ վէճեր յառաջ կուգան
մանաւանդ թաղերու այնպիսի փողոցներուն
մէջ, որոնց տուններու պատուհանները շատ
մօտ ըլլալուն՝ իրարմէ տղու շոր, տղամայի
բերեօք, նսաքրի սուր զըմիւի, չամաքրի
չուան, և շատ անգամ ալ ... խուշո հոգիս
լի նամակներ ձիւէր կոտորոք տեսակէն
կ'առնեն կուտան։

Օրը կիրակի է։ Ռուբէն աղան տալիս պատմա գիշերնոցը կռնակը, ոտքերը բոպիկ տանը բակը աթոռի մը վրայ նստած անդադրում քրտինք կը թափէ, մինչ կինը էպրոս թաշկինակով մը ճակատը դէմքը սրբելով ֆիթիլ ֆիթիլ աղտ կը թափէ մարելիք(․) տէքօլթէին վրայ։

Արեւը կարծես ի պատիւ մայիսին՝ մարդ քեպապ կ'ընէր իր շեշտակի ճառագայթներով։

Յերեկ է. ժամը եօթը։

— Էօֆ, մարիմ պիտի Ռուբէն աղա ... սա հալըս նայէ մէյ մը ... կ'ըսէ տիկինը կուրծքին կոճակները քակելով ...

— Էյ կ'ս ինչ ընեմ ... տաք է իշտէ կը պատասխանէ ամուսինը անտարբեր ...

— Սա երեսս ի վար վազող ջուրերը նայէ սէյ կ'ելլայ կոր ...

— Չամաչըրի աղէկ ջուր կ'ուզէիր կոր ... Էհէն մը բռնէ տակը ...

— Էօֆ ... քու խօրաթաներդ ալ դիտես քի տահա պէթեր սըխընթը կը բերեն կոր վրաս, չէնէ հայտէ դուրս ելլանք, սանկ լեռները մէյ մը պոյլամիշ ընենք ...

— Ես վախտին կէնճութեանս շատ պոյլամիշ եմ ըրեր, չափեր չափչփեր տէ սօնը սօնը է'ն ըռահաթը սա նստած խկէրմիս եմ դտեմ, կընիկ դուրս ելլա՞ս տէ ինչ պիտի հասկնայ ...

— Քա ճանըմ ինծի համար հոգ չէ, աղջիկներս կէօզ կէօրէ կը հալին կոր վերը տաքէն ...

— Հօրին կլոխը պապամ, հօրին կլոխը, հայվաններէն էօրիւնէկ առէք քիչ մը, նայէ մանտաներն ալ պաղշկին տէյի ջուրի խենդ կ'ըլլան, էօռտէկներն ալ անանկ ...

— Քար պերնիդ, զահէր իմ աղջիկներս հայվան են ... ունի՞ս անոնց պէս հայվաններ մը ... Հէմ ինծի նայէ սըտեղէն առապա մը բերել տուր տէ մենք ալ հագոււինք, հազըր ըլլանք ...

— Առապային միւնտէրները հիմա կրակ կտրած են, նստելնուդ պէս պուտ քէպապի կ'ըլլաք ...

— Եաղմա չիգայ, ինչ կ'ըսեմ կոր նէ ան պիտի ըլլայ, տահա նոր չինել տուած շաքխաս սանկ կէօզէ չառքար տեղ մը դրած տէ

դուրս ելած չուենիմ, աղջիկներուս պարակ ֆիստաններն ալ անանկ ...

— Կընիկ իս մտիկ ըրէ, սըտեղէն պաղ պաղ հօրի ջուր կը քաշեմ, թէքնէն կը դենենք օռթան, ես քեզի դուն ինծի, աղջիկներն ալ սըրայով կը լուանք կը պաղշկինք, չըլլա՞ր ...

— Հալաները ելլաս նէ դուրս պիտի իյնամ, հէմ նայէ տահա աղջիկներուս քովը չեմ ըսեր կոր քի երես առնեն, ամա վրանին կը նայիմ սիրտիս եազերը կը հալի կոր ...

— Կընիկ վազ անցայ, առապան վաղ եկէք տէ քալելով սանկ պոյ մը երկնանք խայլի եմ ...

— Քա ա՞ս տաքուն ... վրա՞ս բարի ...

— Էյ թամա՞մ ... սա ինչտար օր քի տաք ընէ նէ Ռուբէնին քէսէյի՞ն պիտի դըպչի ...

— Վճուտիս չի դպի տէ քէսէյի թող դպի, ճմուռ պո՛ւ ըրած վախտը ալուճնե՛րով փատի քէօմիւրիւ փարայ կուտայիր կոր, հիմա՞ ...

— Քա կընիկ, քառուուն զրուշ չէքին փատ առինք երկու շաքաթ տաքցաք, հիմա քառուուն զրուշ առապայի տամ պիտի տէ, երկու սահաթ պաղշկի՞ք պիտի ... հա՞ ... կիւնահ է քա, մեղք քի ժամ երթաս նէ միւնտէրի վրայ չես նստիր քի մեղք է տէյի ...

— Պէ ճանըմ սատկի՞նք պիտի քիւրէմիտին տիպը, չօք չէյ, աշխարհք դուրս է ինկեր, անոնց էրիկները հոգի չուենի՞ն քի կիւռիւլ կիւռիւլ առապայի փարաներ կուտան կոր նէ ...

— Զաթը ինչ տինկող ըլլալդ, թախ պսակին տիպէն հասկցած էի, սա կիւռիս իլլէ մէջը պէօճէկ սըռթիլի առապա կուզեմ տէյի ոտքերդ կետինը զարկիր նէ, հալէ աղ խույըդ վրայդ չի գնաց ...

— Իշտէ ես կ'երթամ կոր շտկուելու, աղջիկներն ալ հագուելոցնեմ, դուն ալ վրադ շտկէ դուրս իյնանք, ըսելով պարտապանաց տիկինը էօֆերով բիւֆերով վեր կ'ելլայ հաղուելու, որուն կը հետեւի խեղճ ամուսինը։

Ժամ մը վերջ բոլորն ալ պատրաստուած են մեկնելու, մինչ դրան առջեւ Ռուբէն աղա կ'առքի կսպասէ։

— Հայտէ նայինք կը ճաթիմ կոր քու-

սէյա տիպը, ուր է առապան ... Կ'ըսէ կէ-
ռիմ կէռիմ հագուած տիկինը, երկու աղջիկ-
ները ետին ձգած :

Ռուբէն աղա պահ մը ետին կը դառնայ
և ի տես իրեններուն :

— Կընիկ ասոր կիրակի ըլլալուն բաղնի-
քը կընիկ չառներ կոր ...

— Հէ՛ ... ա՛տ ինչ լախըտը է հիմա ...

— Այնային կլոսը խաղա՞ եկաւ քի մէյ
մը մէջը չի կրցաք նայելու ...

— Ինչո՞ւ, ինչ տեսար ...

— Իմ տեսածս բոն մը չէ, ետպանճիները
տեսնան պիտի հիմա տէ, անոր համար կ'ը-
սեմ կոյ ...

— Աման դուն ա, չէ կ'ըսես չէ կ'ըսես,
մէյ մըն ալ մէզէլէնմիջ ըլլասնէ ապուխ սա-
պուխ դուրս կուտաս Ռուբէն աղա ...

— Կընիկ ես ձեզի ատ պիչիմը դուրս չի
պիտի կրնամ հանելու ... չէնէ մի տահա չէք
հագուեր սէ ինծի հեա օյնի կ'ելլաք կոր ...
ո՞րն է աճապ ...

— Մեղայ Աստուած ... տահա՞ նասը
կը հագուին, իշտէ ամառուան համար նոր
չինած ֆիստանա, աղջիկներս ալ նորերնին
հագան կիրակի է տէյի ...

— Դուք աս լաթերը, չամաչըրին տակը
հագնիք նէ գէշ չըլլար, լաթ կ'ըսէք կոր իմ
աշկիս միտէն, թեւէն, կէօքսէն պաշխա պան
չերեւար կոր ...

— Քա իշտէ ամառուան համար պարակ
խումաշ, քեզի ո՞վ ըսաւ քի քերքերու մէջ
պիտի փաթթուինք տէյի ...

— Աս ավուճուլ օսկիներ տուինք նէ ա-
սոնց համար էր ...

— Ամա նայէ ինչ աղուոր հաֆիֆ հաֆիֆ
ֆիստաններ եղան ... տահա կայներ սէ
մոմը կ'ընես կոր ...

— Կընիկ, հիմա ատանկ սոխախ պիտի
եկանք ...

— Հապա՞ ...

— Առապային մէջը ատանկ պիտի նըս-
տինք ...

— Ես ինտո՞ր ...

— Տեղ մը վար իջնալու ըլլանք նէ ատ
պիչիմը պիտի նստիք ...

— Ինչո՞ւ, ինչ կայ քի ...

— Կընիկ վերի խաթը չենք ելլար կոր ...
սոխախ կ'ելլանք կոր, սոխախ ...

— Քեզի բան մը ըսեմ, երեսդ չի ցուց-
նէր կոր ամա, ըռաքութալը ցնդեր ես Ռու-
բէն աղա ...

— Վախ Ռուբէն վախ, ամէն զէնահաթը
մանալիքդ միտքես կ'անցնէր, ֆախաթ խա-
սապի պէս միտերը առջիդ ձգած սոխախ սօ-
խախ սեմի՞ք ... պօռալէն պտրտիկդ հիչ
խիլքիս պուճախէն չէր անցնէր, ըսելով
խեղճ մարդը, որպէս զի երկայն խօսք չըլ-
լայ, բաց կառք մը կանչելով մէջը կը լնցնէ
իր սեփօթէ ապրանքները, ինքն ալ թաշկի-
նակը երեսին բռնած ճամբայ կ'ելլան :

— Ա՛տ ինչ է Ռուբէն աղա, մանալիդ
վար առ ամօթ է ...

— Իշտէ խպնելուս երեսս գոցեր եմ քի
տեսնողը հիչ տէյիլ իսէ Ուռուբէնին մալարը
ըսելով նամուսըս սախըզ չընեն տէյի ...

* * *

Տեսարանը կանցնի գազինօյի մը պարտէ-
զը : Ահագին բազմութիւն մը խռնուած է,
բոլոր աթոռները գրաւուած, հագիւ անցնե-
լու տեղ մը կայ :

Ռուբէն աղա և իրենները ներս մտնել-
նուն, բոլոր ներկայները աչք կը կտրին և
բարսուք մըն է կը փրթի մէջերնին :

Տիկինին թեւերուն տակ քրտինքը թուղ-
թէ հէլվաի պէս կսկկոր հետք մը ձգած էր,
քօտէին պալէնաներուն գիծերը ներսի խո-
նառութենէն մատ մատ կերեւէին, գէմքին
քսած բուտուան՝ մայեան եկած չէօթէկի խմո-
րի պէս լափ լափ կը կենար, ոտքին քրտին-
քէն ալ դեղին սկառքիներուն վրայէն տա-
սը մատները համրուելու աստիճան մութ
գոյն մը առած էին : Օրիորդները՝ որոնք
չատ աւելի թեթեւ մուսուլիներ հագած
էին, անոնք ալ խաշած քարտէսի պէս կաս
կարմիր, ձեռքի բարակ թաշկինակներովն
միշտ գէմքերնին և վիզերնին կը խմամէին :

— Ռուբէն աղա, սըտեղը մատս մը կայ
պօշ, ըսէ տէ աթոռ բերէն նստինք ... Կ'ը-
սէ տիկինը, աչքովը չորս դին դիտելով,
հագած և հագցուցածները հախ ընելու հա-
մար :

— Ինծի մընայ նէ սըվըշը դենք կընիկ,
զէրէ կայնած տեղս թէփէյիս պիտի իշնայ ...

— Գա ճանրմ օյինի մ'ելլար կէնէ, մեզի կը նային կոր ...

— Իշտէ մեզի կը նայինկորը ես ալ ֆառ-ղին դացի տէ անոր համար չեմ նստիր կոր եւմ, նայէ ամենուն առջին մէզէն հատեր է, մենք ալ թամ վախտին ենք եկեր ...

— Նաղմա չիգայ քի աստար փարանե-րէն թափթփիմ տէ թավուխի պէս լուս աչ-քով տունս քաշուիմ, պագսանա, շուրանա խկէրմի կէթիր, կ'ըսէ տիկինը, տաքէն ու նեղուելէն ալ աւելի կարմրած :

Բիչ վերջը բոլորը մէկ կը նստին, երկու շիշ փրկարար Պոմօնթի, մէկ երկու տեսակ մէզէ կը բերուի ու ալ ամէն բան իր տեղը կը դնուայ :

Խուճը մը երիտասարդներ, որոնք կար-ծեմ լաւ մը դուլխններին տաքցուցած էին, իրարու ականջին կը փսփսան,

— Ետիդ նայէ ծօ', տահա Օգսէնը կ'ըսէ կոր քի աս վախթի պտըրծինները ետման կ'ըլլան տէյի ...

— Սուս եղիր ծօ', ֆառղին եմ ամա, չտեսի պէս պերտէն պիրէ մի նայիք, հէրիֆը խուռնազ է, կ'ըլլայ քի ժողուելուն պէս կառնէ կը քալէ ...

— Կինացդ Մառտիկ ... ես մէզէ չեմ ուզեր, նայէ իմ մէզէնե՞րս ... վրանին թիւլ էն անցուցեր քի ճանճերը չաղտոտեն տէյի ...

— Ինծի նայէ ծօ' Լեւոն, քովդ նստող աղջկանը չալլախ թեւին մէջը սեւ խույ-րուխլու պէօճէկ մը կը պտըտի կոր ... կ'ը-սէ անոնցմէ մին, աչքերը օրիորդին բաց թեւին վրայ տնկած ...

— Ինչուս պէտք ծօ', նա՞սըլ հէրիֆին հետ տալաշտըմիշ կ'ընեն ինծի ...

— Կիւնա՞ն է պէ' ... կամաց մը ըսէ ա-կանջն ի վար քի վար նետէ, կ'ըլլայ քի զէ-հիւրի կ'ըլլայ ...

Երբ բոլորը մէկ հաւանութիւն կուտան թէ՛ պէտք է որ ըսուի օրիորդին, մէջներնուն է՛ն սիւլիլիզէն՝ միւսիւ Լեւոնը կամաց մը օ-րիորդին կողմը ծուլով աթոռը, ականջն ի վար,

— Ներեցէք օրիորդ, կարծեմ թէ ձեր թեւին մէջ միջատ մը կայ ...

— Վո՛ւյ ... ըսելով օրիորդը տեղէն կը ցատկէ և շիտակ հօրը վրայ կ'իջնայ մեծ ի-րարանցումով մը :

— Ի՞նչ եղաւ վարդենիս, ի՞նչ կայ ... դող կ'ելլամ կոր կ'ըսէ տիկին մայրը, մինչ Ռուբէն աղա,

— Նասըլ քա ... սօնը սօնը կըսի՞թ ալ կերաք, հա՞, ամ էր ուզածնիդ ... ո՞վ կըս-մըթթեց ...

— Ձէ հայրիկ, պէօճէկ կայ եղեր պէօ-ճէկ ...

— Աման Ռուբէն աղա, ուր է նէ թող ցուցնեն տէ հանենք ...

— Ասդին եկուր նայիմ քա՛ ... ո՛ւր է եղեր տա պէօճէկը ... ըսելով երբ խեղճ մարդը ակնոցը քիթը դնելով թիւլին տակէն մերկ թեւին վրայ միջատ կը փնտռէր, յան-կարծ կը կենայ ...

— Գտա՞ր Ռուբէն աղա, չտրուխ ըսէ ...

— Պէօճէկը գտայ ամա ետմուռն է, ա-սըլ անսօնը կուզեմ կոր քի ձեռք ձգեմ ... ասոր թեւը ո՞վ խածաւ ...

— Հի՛չ, ո՞վ պիտի խածնէ, դուն գիտես քի ես ատանկ բաներ չեմ ըներ ... կ'ըսէ մայրը ինքն ալ մօտէն դիտելով, քա աս ը-ռարութալը խածեր են տէ հիմա վախթի ան-ցեր է նէ օթթան է ելեր ... վա՛խ վա՛խ վա՛խ, քա շան ձգնած, որի՞ խածցունել տուիր աս թեւդ ...

— Ձէ մայրիկ խապար չունիմ ... տեղ զարկեր եմ ...

— Հապա՞, տեղ մը կայ ամա ակուններուն տեղն է, աս նայէ, աճապ տէլիխանլները ֆառղին գացին տէ էյլէնճէի համար պէօճէկ կայ ըսին ... ծունը դիտուս ... կ'ըսէ մայ-րը խմած պիռային հուրքը դուրս տալով ...

— Գալեցէ՛ք, գալեցէ՛ք, զէրէ իմին պէյս ալ պէօճէկ էնմիշ կ'ըլլայ կոր ... աս ալաֆուանկային մէջը փսխեմ քի նամուսիս վրան թիւլ կը տնկէ կոր : Նորէն չալլախ թե-ւերնին դուրս ձգէ տաքէն քի, շան զաւակ օյինինները թէղ ելլան տակէն :

ԼԻԼԱ



ԼԻԼԱ ՓՈՂԿԱՊԸ

ՊՐՆ. ՄԵՐԱՍԵԼԻՆԱՆ՝ հօրը թողած հա-
րըստութեանը ծայրէն ուռել սկսած է. ամէն
օր նոր քոսթիւմ կը հագնի, նամանաւանդ
փողկապը՝ օրը երեք անգամ կը փոխէ:

ՊՐՆ. ԵՐԿԱՆՔԱԹԵԱՆ՝ պարոն Մերաս-
եկեանի մտերիմ բարեկամը, քօհաձ երիտա-
սարդ մը:

ՄԵՐԱՍԵԼԻՆԱՆ. — (Հայելիին առաջը
կեցած փողկապ մը կը կապէ, կապուածքին
չի հաւնիր, նորէն կը քակէ): Օ՛հ, կէս ժամ
է որ կը յօգնիմ կոր սա փողկապը կապելու
համար, չըլար կո՛ր, ուզածիս պէս չիք
չկապուիր կոր, ուրիշի ժամագրութիւն ալ
տուած չըլլամ նէ, մէյմըն ալ Կոպենք թե-
րեւս այս անգամ յաջողիմ ...:

ԵՐԿԱՆՔԱԹԵԱՆ. — (Ներսէս կը մտնէ սեն-
եակէն) օհօ ... նորէն գոյիսալ ... նո-
րէն փողկապ, նայի՛մ, (մօտենալով) այս ան-
գամ ալ երկնագոյն, սակայն ես ա՛ս գոյնին
չհաւնեցայ (քօնսօլին վրայ դրուած լիւս փող-
կապը կառնէ) զոր օրինակ սա՛, հազար ան-
գամ աւելի կարժէ ա՛ս փողկապէն, աչքի կը
զարնէ, սիրտի կը զարնէ ...:

ՄԵՐԱՍ. — Արդէն ատիկա Օր. Ս.ին
նուէրն է ...:

ԵՐԿԱՆ. — Տեսա՞ր... տեսա՞ր... Օր. Ս.
ճաշակ ըսուած բանը ունի եղբր, երկնագոյն,
երկնագոյնը ինչ պիտի ըլլայ, եղբայր սա
լիւս փողկապը կապեմ աէ, նայէ ինչպէս
պիտի երեւայ և ճաշակիդ լեզու պիտի հա-
նէ ... (իր փողկապը կը հանէ, գետին կը
նետէ և լիւս փողկապը կը կապէ) նայէ՛,
ինչպէս եղաւ... գիտեմ որ պիտի հաւնիս...
ես ճաշակ ունիմ, ճաշակ ...:

ՄԵՐԱՍ. — Հի՛չ չհաւնեցայ ...:

ԵՐԿԱՆ. — Չհաւնեցա՞ր, սակայն հիմակ
պիտի հաւնիս ... (աթոռի մը վրայ ձգուած
ֆանթէզի ժիլէ մը ցուցնելով) սա՛ այս օրուան
հագնելիք ֆանթէզի ժիլէդ չէ՞ ...:

ՄԵՐԱՍ. — Այո՛ ...:

ԵՐԿԱՆ. — (Ժագէթը և ժիլէն կը հանէ)
հիմակ անիկա հագնիմ և պիտի տեսնաս թէ
լիւս փողկապը ինչպէս պիտի երեւայ ...,
պիտի հաւնիս և առ փողկապը պիտի կապես
փոխանակ երկնագոյնին ... (ֆանթէզի ժի-

լէն կը հագնի և Մերասեկեանին դառնալով)
հաւնեցա՞ր ...:

ՄԵՐԱՍ. — Ո՛չ, անճաշակ բան մը կե-
րեւայ կոր, երկնագոյնը ո՛ւր, առ ո՛ւր, ա-
հագին տարբերութիւն սիրելիս ...:

ԵՐԿԱՆ. — Սա՛ այսօրուան ժագէթդ ալ
տուր նայիմ, չէ՛ ... չէ՛ ... դուն մի՛ յոգ-
նիր, ես կառնեմ ... ես կառնեմ ... դո՛ւն
քու երկնագոյն փողկապդ կապելդ նայէ ...
քանի որ կը հաւնիս, (ժագէթը կառնէ կը
հագնի) ի՞նչպէս գտար ...:

ՄԵՐԱՍ. — Հիմակ աղուոր եղաւ ...:

ԵՐԿԱՆ. — Չէ՛ այսքանով լիւս փողկա-
պին աղուորութիւնը չերեւար ... սա ոսկի
ժամացոյցը և շղթան տուր (ժամացոյցը կառ-
նէ և ժիլէին դրպանը կը դնէ և շղթան կան-
ցընէ) հիմակ ի՞նչպէս է ...:

ՄԵՐԱՍ. — Աղուոր ...:

ԵՐԿԱՆ. — Դեռ առ բան մը չէ ... դուն
սովորութիւն ունիս վիօլէթի վնջիկ մը խո-
թել լամբակիթ, եթէ ես ալ անանկ ընեմ...
այո՛, ընեմ որ տեսնաս (պատուհանին առ-
ջեւ կերթայ և վիօլէթի մը թաղարէ ծա-
ղիկ մը կը փրցնէ և լամբակին անցնելով աս-
դին կը դառնայ) ինչպէս, եղա՛ւ ...:

ՄԵՐԱՍ. — Հիանալի՛ ...:

ԵՐԿԱՆ. — Եւ բարտըսիւն ալ (բարտը-
սիւն կառնէ աթոռին վրայէն) սա՛նկ եթէ
թեւիդ վրան առնելու ըլլաս ... և դաւա-
ղանդ (Մերասեկեան զաւազանը կուտայ)
մեռար, ու լիւս փողկապը կսկսի փայլիլ,
հա՛, քիչ մնաց կը մոռնայի կոր, փողկապին
վրայ աղամանդէ քարով ասեղ մը կը վալլէ,
ան ալ դնենք որ կատարեալ ըլլայ (քօնսօլին
վրայէն կառնէ ասեղը և փողկապին կը խո-
թէ) հիմակ լիւս փողկապը ի՞նչպէս է ...:

ՄԵՐԱՍ. — Սքանչելի՛ ... սքանչելի՛ ...
ըսելիք չկայ ...:

ԵՐԿԱՆ. — Աղամանդը լիւս փողկապին
վրայ կը ցոլա՞յ կոր ...:

ՄԵՐԱՍ. — Այո՛ ...:

ԵՐԿԱՆ. — Սիկառ մըն ալ... պատրաստ,
առաջին կարգի սիկառ մըն ալ, (Մերասեկե-
ան սիկառ մը կուտայ և կը վառէ) հիմակ,
սիրելիս ինծի ներողութիւն ... չեմ ուշա-
նար ... աղջիկտեսի պիտի երթամ, արդէն
եկած էի քեզմէ ձեռք մը հագուստ խնդրել...
չուտ պիտի գամ, անհոգ եղիր (արագ արագ
դուռնէն դուրս կելլայ):

ՄԵՐԱՍ. — (Թապլօ) ...:

Վ. ԳԵՐԵԳՅԱՆ

ՄՈՌԱՅԿՈՏՈՒԹԻՒՆՆ

Այո՛, շատ մոռացկոտ եմ սիրելիս և այն-
քան մոռացկոտ որ չեմ կրնար պատմել, կար-
ծես թէ քնատուր ձիւք մըն է ինձ պարզե-
ռած... Ի վերուստ Եւ ահա մոռացկոտ ըլ-
լալս ասկէ յայտնի է որ՝ օձիքս դրեր, հազ-
ուեր, սգուեր ու հոս եկեր եմ առանց փող-
կապի... քանի որ մոռցեր եմ կապելու,
ձրգ... ձրգ... ձրգ... ասոր ծայրը ուր
պիտի երթայ սիրելիս: Ինչու կը մոռնաս կոր
ըսին սիրելի բարեկամներս, սակայն, մոռ-
ցայ իրենց պատասխանել... և մէկ կողմ
քաշուած բաւական մը զարմացեր են մոռաց-
կոտութեանս վրայ, ուստի ինծի առաջար-
կեցին որ բժիշկի նայել տամ: Քանի մը ա-
կանաւոր ու ճարտար բժիշկներ կանչեցի,
մարդիկը առանց մէկ երկուքի, գանկս բա-
ցին, ուղեղս դուրս հանեցին, գիտէք ինչ
են գտեր, ուղեղիս քլիշները գոց են եղեր...
և գիտական բառով ալ՝ ուղեղաբջիջադա-
րարում կըսուի եղեր...: Ու նորէն գան-
կիս մէջ տեղաւորեցին ուղեղս՝ առանց բը-
ջիշները բանալու և մեկնեցան՝ առանց իրենց
այցեգիրը ստանալու... քանի որ մոռցեր
եմ վճարել...: Կուզէ՞ք որ քիչ մը մոռաց-
կոտութեանս հետեւանքները ձեզի պատմեմ:
Քանի որ սիրելիս, ուտել պէտք է ապրելու
համար. իմ ալ փորս անօթեանալուն պէս ճա-
շարան մը կերթամ, պատուական մը ստա-
մոքսս կը լեցնեմ ու դուրս կելլեմ ճաշարա-
նէն, մինչ ճաշարանապետը ինք անձամբ ե-
տեւէս կուգայ հաշիւը պահանջելու... քա-
նի որ մոռցեր եմ եղեր հոն վճարել, վերջն
է որ կը հասկնայ ուղեղաբջիջադարարում
ուսնենալս և ներողութիւն կը խնդրէ...:
Ինչպէս որ ստամոքսիս պահանջը կը գոհացը-
նեմ... ուտելով, պէտք է որ մտքիս պա-
հանջն ալ գոհացնեմ... կարդալով, ուստի,
գրատուն մը կը դիմեմ, գիրք կառնեմ և կը
մոռնամ վճարել, ասոր վրայ, գոյգ մը հը-
րատարակիչները, իրենք անձամբ պրպանէս
դրամը դուրս կը քաշեն, քանի որ գիտեն՝
ուղեղաբջիջադարարում ուսնենալս և կը
խնդրեն ալ որ, աս անուշով գիրք մը չի-
նեմ, հրատարակեն, որպէս զի՝ իրենց մատե-

նադարանին մէջ գլուխ գործոց մը երեւայ...:
Դեռ քիչ մը առաջ սիրելիս, ապտակ մը կե-
րայ պարտատէրներէս մէկէն, որովհետեւ վը-
տարած էի զինքը միտքէս քանի որ մոռցեր
եմ բոլորովին... և ապտակը կերած ատե-
նըս ալ մոռցայ՝... փոխարինելու և որոշե-
ցի միշտ, միշտ սիրելիս... մոռնալ քանի
որ՝ ուղեղաբջիջադարարում ունիմ...:

Մոռնալ... ինչ անո՛ւշ և շատ քնքամ
լեղի ունակութիւն մը, որուն ննթարկուողը
գիտէ... անոր համը:

Տեսէք քիչ մնաց պիտի մոռնայի ստո-
րագրիչ:

ԱՆՄԵՌՈՒՄ



ԹԵԻԵԼՔ

ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլ-
սոյ համար 80 դրուշ, գաւառներու համար
108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.:
Ձեռքէ վաճառում՝ քաւ փաւա: Հասցէ՝
Ղալաթիա, Քամանաս փողոց: ԱՐԵՒԵԼՔ
հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խը-
նամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուած-
ներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղե-
կութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբ-
ագրութեամբ և իր կարող աշխատակիցնե-
րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տե-
ղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի
հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխ-
ներու շնորհիւ գորս ներմուծած է թերթին
մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-
ԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴՈՒՆԱԿԱՆ ՀԱՆՁԱՄԱՆՔԸ, որով իր
ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերա-
բար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսա-
բաններ: Ոչ նուազ կը դնահատուին իր մաս-
նագիտական յօդուածները, եկեղեցական,
կրօնական, տնտեսական-սեղանաւորական,
երկրագործական, իրաւաբանական եւայլն,
բացի գրական, բանասիրական գրուածքնե-
րէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնո-
թերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն
մը կը կազմեն:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՈՒ

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ

ՏԻՐԱՐ ԵՐՈՒԱՆԴ ԳԱՍԱՊԵԱՆ

Որ Կ. Պոլսոյ հայազգի թէ օտարազգի ճարտարարուեստ՝ առաջնաբայութեամբ առաջնակարգ դասուն մէջ ունի պատուոյ իր տեղը, շնորհաւորելի է այն մեծ յաջողութեան համար, որով՝ մէկ քանի օր առաջ, կրցաւ հաղուագիւտ ու զարմանալի ճարտարութեամբ մը բուժել ցաւն ու զեւեղել խախտած առաջնաբայութեան մայրաքաղաքս այցելող երկու նշանաւոր զբօսաշրջիկներուն, որք չատերու դիմելով չէին օգտուած ու միշտ տառապած էին ցաւով ու լինտատապով, և յայտնեցին իրենց խորին շնորհակալութիւնն: Տիրար ԵՐՈՒԱՆԴ ԳԱՍԱՊԵԱՆԻ այցաքարան առին որպէս զի Պոլիս այցելող ամէն իրենց զբօսաշրջիկ բարեկամաց ծանուցանեն զինքը:

Պոլիս, Բարձագ-Գաբու Պալ-մոմճըլար: Առ Տիրար ԵՐՈՒԱՆԴ ԳԱՍԱՊԵԱՆ ճարտարարուեստ առաջնաբայութեան, որուն աշխատանոցի կատարելագործեալ սրահը կը դիմեն արդէն ամէն օր ամէն ազգի ու սեռի յաճախորդներ, միշտ գոհ մնալով հայ արհեստաւորին ճարտար գործողութիւններէն:

ՅՈՎՀ. Մ. ԱԶՆԱԽՈՐ

ՏՊԱԳՐԻՉ-ԳՐԱՎԱՃԱՌ

Կ. Պոլիս, Պապը-Ալի Բասթէսի բիւ 56

Կ'ստանանք և մաքուր տպագրութիւնով կը յանձնէ տպագրական ամէն տեսակ գործ. ուղղամտութեամբ կը կատարէ գաւառական ամէն կարգի յանձնարարութիւններ՝ Թուրքերէն և Հայերէն գրքերու վրայ: Տեղական բոլոր օրաթերթերու և հանդէսներու, ինչ լեզուէ որ ալ ըլլայ, բաժանորդ կ'արձանագրէ և կանոնադրաբար կը ղրկէ տրուած հասցէներուն՝ ամսական վճարումներով և ուրիշ դիւրամատչելի պայմաններով: Ու և է թերթի մը ժամանակաւոր կամ ռնպայման կերպով զադարման պարագային առանց թերթի չի

ձգէր իր բաժանորդը և կը ղրկէ ուրիշ ու և է թերթ որ ուզուի: Որպէս զի դիւրութիւն մը ըլլայ գաւառացի ընթերցողներու, հոս կը դրուի տեղական ամէնէն աւելի կարգացուած մէկ քանի Թուրք թերթերու անունները իրենց ամսական բաժնեգիններով (մէջն ըլլալով թղթատարական ծախքը):

Իգտամ	օրաթերթ	15 ղրշ.
Սապահ	»	15 »
Թէրհիմանը-Հազիգաթ	»	12 »
Սաատէթ	»	10 »
Սէրվէթի-Ֆինուս	պատկերազարդ շաբաթաթերթ	15 »

Ծիշդ այս ձեւով բաժանորդ կ'արձանագրէ նաեւ բոլոր Հայ, Յոյն և տարբեր լեզուով հրատարակուած օրաթերթերու և շաբաթաթերթերու:

Վերոյիշեալ թերթերէն մէկին վեցամսեայ բաժանորդագրութիւնը մէկէն վճարողներ պիտի ստանան տուի մը այցաքարդ ինչ ձեւով և ինչ լեզուով որ ուզեն:

Դիմել՝ Յովհ. Մ. Ազնաւորի, Պապը-Ալի ճատտէսի թիւ 56:

ՄԱՅ

ՀՈԼԱՍ ԷՖԷՆՏԻԻ

Օսմանեան Տրամաթիք բասերախումբէն կը պակսի կարեւոր անգամ մը, մահովը ՀՈԼԱՍ ԷՖԷՆՏԻԻ, որ շուրջ երեսուն տարուան բեմական իր անխոնջ աշխատութեամբ պատուաբեր անուն մը շինած էր եւ շահած բասերաքեր ժողովուրդին սերն ու համակրանքը: ՀՈԼԱՍ ԷՖ. Մնակեան խումբին կարող դերակատարներէն ըլլալով, շատ անգամ նոյն իսկ Մնակեան Էֆէնտիի դերերը կատարէր, զգալի ընել չալով Մեծ վարպետին պակասը:

Կուռ առողջանութեամբ մահուր տանկերէն մը կը խօսէր եւ իր ձայնին վայելուչ թօնը անգամ մ'ալ հանելի կ'ընէր զինքը տեսնել ու վայելելը բեմին վրայ, ուր աշխատած է այնքան տարիներ:

Վերջերս իրեն վիճակած անողոք կարուածը զինք մինչեւ գերեզման առաջնորդեց: Խմբագրութիւնս խորապէս կը ցաւակցի այս ինքուր կորստեան առթիւ:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Կարելոր աղ-
բիւրէ մեզ կը տեղեկացնեն թէ՛ կա-
րելոր թաղի մը միւսին իր նշանածին
նուէր տալու համար մայրիկին ոսկի
պռօշը, պռօշն գողցեր է, և սակայն
խնդիրը շուտ իմացուելով՝ գողոնն ուէ-
րը կրկին գտեր է բուն իսկ իր տէրը :
(Եթէ այդ միւսին պիտի կարգուէր
առջի պսակին, պէտք էր նախապէս
խաբրը հարցնէր պարապ քսակին. Ծ. Խ.) :

ՍԿԻՒՏԱՐ. — Միացեալ վարժարան-
ներու Պատ. Տեսչութենէն կը խնդրուի
ազդարարել տղաքը պտոյտի տանող
միսիններուն, որպէս զի իրենք ծառե-
րու շուքին տակ ապաստանելով մինի-
նիկները արեւին ֆէպպ ընել չտան,
չի հանգստանալու համար փոխանակ զբո-
սանքին, տաք հոսանքին, և կամ
փորձանքին :

ՆՈՅՆ. — Ազնիւ քոյրերս, եթէ
կ'ուզէք ձեր ամառուան գլխարկները
չիք, ճոխ և ալ պէնի կրել այս տարի,
և եթէ զանոնք չէք գնած տակաւին,
կը խնդրենք որ այս կիրակի օրուան
թատերական ցերեկոյթին ներկայ գըտ-
նուիք ուր պատրաստ պիտի գտնէք
գլխարկներու այլազան ճոխ մթերք մը
ի ցոյց ոչ թէ ի վաճառ :

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Այս տարի կրկին
օրիորդներու թիւարարութիւնը ծայր
տուաւ հոս : Տեղացի օրիորդներ իրա-
րու concurrence մը ընելու համար մին-
չեւ անգամ Ամէրիկայէն ֆօքսիւմներ
բերել տալ որոշած են : (Կարծեմ թէ
տաստառակն ալ ամերիկացէն կը չին-
աւի. Ծ. Խ.) :

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Կիրակի օրերը
հոս զքանչեղի միւզիք մը ունինք, շը-
նորհիւ մառուակեր տիկիններու և օ-
րիորդներու, որոնց ուտուածքին ձայ-
նը կատարեալ օրֆէսթոի մը պատրան-
քը կուտայ կոր լողացոյ : Հապա տեսու-
ղաց ի՞նչ կուտայ կոր, խնդրեմ յաջոր-
թիւ իմացուցէք մեզ. Ծ. Խ.) :

ՇԻՇԼԻ. Անցեալ օր ա լա պեշ
դրուշ Փայթօնի մը մէջ պառկած քան-
նստած միւսիւի մը գլխարկը հովէն
թռաւ, բայց . . . խելքը տեղը մնաց,
ուխտելով ուրիշ անգամ չի կրկնել այդ
չտես ձեւը :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԷՐԳՐՈՒՄ. — Վ. Տ. ԷՖ. — Պոլիս գըտ-
նուած միջոցնիդ մեզ չի պատուեցիք, բայց
Լեփեան էֆէնտիի ձեզի յանձնած տարեկան
բաժնեդինը գէթ մեզ վճարէիք, ինչպէս և
ձերը :

ՊՐՈՒՍԱ. — Ուսմ. ընկ. — Բաժնեդինին
կսպասենք :

ՊԱՆՏՐՄԱ. — Գործ. — Հաճեցէք մեզ
հասցնել ամէն անոնց բաժնեդինները, որոնց
ժամանակամիջոցը վերսկսած է :

ԵԳԻՍՏՈՍ. — Լ. Թարագնեան — Ձեր
պայմանագրամը կսկսի Յունիար 1էն 1907 :
Դրամը ստացած ենք :

ՆԱԵԼ ՄԵՐ Կ. Պոլսոյ Պատ. բաժանորդ-
ներէն կը խնդրենք որպէս զի մեզի տեղե-
կացնեն օրը օրին երբ ո՛ր և է թիւ մը չին
ստանար, ապա թէ ոչ ժամանակը անցած
թիւերը դժուար է մեզ հասուցանել :

Արսովսկի ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասցէսի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊՆԵՐ ԶԵՆՈՒՄ


Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թուրքական խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գինեւրու անմրցելի
աժանութեամբ շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց չիք եւ գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Դաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—35



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆԻ

Ճեղալ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեդանէ,
Ջինասանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ ծա-
րունէ:

Ամենէն զգուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատչային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ՝ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, և այլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձև շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաև մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաև խոսա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաև կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և լն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաջ տոկունութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք գիմել ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻՒ 13

50—24